ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ РЕСПУБЛИКА АРМЕНИЯ REPUBLIC OF ARMENIA

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ИНФОРМАЦИОННЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОЙ АССОЦИАЦИИ ПОТРЕБИТЕЛЕЙ
INFORMATION MAGAZINE OF NATIONAL ASSOCIATION OF CONSUMERS

ՍՊԱՌՈՂ

ՍԿՍԱԾ
1997
թվականից



ՄԱՐՏԻ 15-Ը՝

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

Սիրելի սպառող,
պաշտպանեք Ձեր իրավունքներն ու շահերը՝
չմոռանալով պարտավորությունների մասին:

1 ՄԱՐՏ 2021

Լավագույնը հայրենական արտադրողից

Sunfood



ՍՊԱՌՈՂ

տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական պարբերական

Հիմնադիր և հրատարակիչ՝
ԱՆՆԱ Սպառողների ազգային ասոցիացիա

ՄԵԼԻՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր խմբագիր

ՍԱՄՎԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Գործադիր տնօրեն

ՆԱՐԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր

ԼԻԱ ՕՍԻՊՅԱՆ
Սննդամթերքի անվտանգության վերլուծության պատասխանատու, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌՈՒԲԵՆ ՀԱՅԹՅԱՆ
Ասոցիացիայի փոխնախագահ, մարքեթինգի և մոնիթորինգային հետազոտությունների պատասխանատու, սննդի ապահովման ծառայությունների սերտիֆիկացման փորձագետ, սննդի որակի աուդիտոր

ԼԵՎՈՆ ԱՃԵՄՅԱՆ
Գյուղմթերքների որակի վերլուծության պատասխանատու, Կենսաբանական գիտությունների թեկնածու, Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի անդամ

ԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Ասոցիացիայի արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ, փորձագետ

ՀԱՍՄԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ, PR մասնագետ

ՌՈԶԱԼԻԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ
Լաբորատորիաների գծով փորձագետ, միս-մսամթերքի մասնագետ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԵԼԻՔՅԱՆ
Ասոցիացիայի գլխավոր փորձագետ, Տնտեսագիտության թեկնածու

ԱՍՏՂԻԿ ՓԵՓՈՅԱՆ
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ «Կենդանական ծագման հումքի և մթերքի վերամշակման տեխնոլոգիայի» ու «Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի» բաժինների վարիչ, Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԺԵՆՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների որակի վերլուծության պատասխանատու, Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԱԻԴԱ ԻՍԿՈՅԱՆ
Իրավախորհրդատու, ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

ԱՂԱՎՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լրագրող

ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ
Դիզայներ

ԱՐԵՎԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Լուսանկարիչ

ՍՊԱՌՈՂ

տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական պարբերականի խմբագրական խորհուրդ

ՀԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՎԻԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Բժիշկ-ճառագայթաբան,
Բժշկական գիտությունների դոկտոր

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԵՄ ՉԱԽՈՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ նախագահության անդամ

ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ,
Տնտեսագիտության թեկնածու

ԱՐՍԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի Արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ

ՅՈՒՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Հայաստանի վաճառականների միության նախագահ

ԿԱՌԼԵՆ ԱԴԱՄՅԱՆ
ՌԴ Չափագիտության ակադեմիայի ակադեմիկոս,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ

ԿԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԴՈՐԱ ՍԱՔՈՒԼՅԱՆ
Մոնրեալի ՄաքԳիլ համալսարանի դասախոս, դոկտոր, պրոֆեսոր

ԻՐԻՆԱ ՎԻՆՈԳՐԱԴՈՎԱ
Սպառողների ազգային ասոցիացիայի պատվավոր անդամ



CONSUMERS INTERNATIONAL

ՄԱՐՏԻ 15-Ը՝ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ

Սպառողների իրավունքների պաշտպանության համաշխարհային օրը նշվում է յուրաքանչյուր տարի՝ ընդգծելու համար սպառողների պաշտպանության և հզորացման կարևորությունը: Աշխարհին ընդունում է սպառողների 8 իրավունք, որոնցից չորսը սահմանվել են ԱՄՆ 35-րդ նախագահ Ջոն Քենեդու, մյուս չորսը՝ Սպառողների միջազգային կազմակերպության (Consumers International - CI) կողմից:

Դրանք են.

- **անվտանգության իրավունքը,**
- **տեղեկատվություն ստանալու իրավունքը,**
- **ընտրության իրավունքը,**
- **լսված լինելու իրավունքը,**
- **հիմնական կարիքները բավարարելու իրավունքը,**
- **վնասների փոխհատուցման իրավունքը,**
- **սպառողական կրթության իրավունքը,**
- **առողջ միջավայրի իրավունքը:**

Սպառողների միջազգային կազմակերպություն

Սպառողների միջազգային կազմակերպությունը գործում է գրեթե 6 տասնամյակ, ունի 200-ից ավել անդամ-կազմակերպություն ավելի քան 100 երկրից և աջակցում է սպառողներին ու պաշտպանում նրանց իրավունքներն ամբողջ աշխարհում: Միջազգային այս կառույցի անդամները պաշտպանում են սպառողների իրավունքները ողջ աշխարհում, ներկայացնում վերջիններիս շահերը ՅՈՒՆԵՍԿՕ-ում, Եվրամիությունում, Եվրախորհրդում, Առևտրի համաշխարհային կազմակերպությունում, ՄԱԿ-ի կառույցներում, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունում և այլն:

Սպառողների միջազգային ասոցիացիայի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչները հավատարիմ են, փորձառու, անկախ: Նրանք ներկայացնում են շահույթ չհետապնդող սպառողական խմբեր, որոնք պատասխանատվություն են կրում սպառողների կյանքում կատարվող զգալի բարելավումների համար:

CI-ի անդամ-կազմակերպությունները, այդ թվում՝ 1991 թ.-ից մեր երկրում սպառողների շահերի պաշտպանություն իրականացնող և 1998-ից Սպառողների միջազգային ասոցիացիային անդամագրված Սպառողների ազգային ասոցիացիան, սեփական երկրներում անկախ են, ազատ առևտրային կամ քաղաքական ազդեցություններից: Նրանց հիմնական նպատակը սպառողների իրավունքների պաշտպանությունը խթանելն է, խնդիրները լայն հանրությանը հասանելի դարձնելը, վեճերում շահերը ներկայացնելը, բողոքները քննարկելը, իրազեկվածության մակարդակը բարձրացնելը, հզոր և արդյունավետ կապեր հաստատելը համապատասխան պետական, ազգային ստանդարտացման մարմինների հետ, սպառողական կրթությունը զարգացնելը:

Ի դեպ, դեռևս 2019 թ. Սպառողների ազգային ասոցիացիան և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը եկել են համաձայնության, ինչի արդյունքում Ասոցիացիան հենց նույն թվականին տպագրել է ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ուսումնական ձեռնարկը և ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ առարկայի մեթոդական ուղեցույցը, որոնք այս պահին դրված են նախարարության համապատասխան բաժնի քննարկմանը:

Սպառողների միջազգային կազմակերպությանն անդամակցությունը մեր երկրի համար հրաշալի հնարավորություն էր Սպառողների ազգային ասոցիացիայի, մասնավորապես՝ Ներքին ու արտաքին հարաբերություններով զբաղվող բաժնի միջոցով բարձրաձայնելու հայ սպառողին մտահոգող խնդիրներն ու մեր երկիր ներմուծելով աշխարհում սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա ահռելի փորձը, ինչից շահում են սպառողները, այսինքն՝ ամբողջ հասարակությունը:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

Սպառողների միջազգային ասոցիացիան 2021-ը հայտարարել է ՊԼԱՍՏԻԿ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ-ի տարի

2021-ի այս օրը սպառողներն ու սպառողների շահերի պաշտպանները կհամախմբվեն՝ պահանջելով գլոբալ փոփոխություններ՝ կապված շրջակա միջավայրի պահպանման և սպառողների առողջության հետ: Իսկ այս ամենն առաջին հերթին ենթադրում է շուկայի համակարգային փոփոխություն հնարավոր բոլոր մակարդակներում՝ սկսած կառավարություններից, բիզնեսից և այլն: Պահանջվող մասշտաբով ազդեցության հասնելու համար անհրաժեշտ է կայուն այլընտրանքները մատչելի և հասանելի դարձնել, վերամշակման արդյունավետ ենթակառուցվածքներ ստեղծել և սպառողներին ընտրություն կատարելու հնարավորություն ընձեռել՝ համապատասխան լիարժեք տեղեկատվություն տրամադրելով:

Միջազգային կազմակերպությունը մարտի 8-15-ն իր անդամների հետ գործակցությամբ կստեղծի տեղեկատվության հարթակ՝ Սպառողների իրավունքների համաշխարհային օրը պլաստիկով աղտոտվածության դեմ համատեղ պայքարելու նպատակով:

CONSUMERS INTERNATIONAL YEAR OF PLASTIC POLLUTION CONTROL



Consumers International-ը պաշտոնապես հայտարարել է Սպառողների իրավունքների պաշտպանության համաշխարհային օրվա՝ Մարտի 15-ի թեման՝ Պայքար պլաստիկ աղտոտվածության դեմ: Աշխարհում պարբերաբար իրականացվող ու արդեն մշտական բնույթ կրող այս արշավը կբարձրացնի ողջ աշխարհի սպառողների իրազեկվածությունը և հնարավորինս կներգրավի նրանց խնդիրը գլոբալ մասշտաբով լուծելու աշխատանքներին: Պայքարի առաջամարտիկները, ինչ խոսք, սպառողների շահերի պաշտպաններն են և կառավարությունները: Consumers International-ը կոչ է անում վերջիններիս քայլեր ձեռնարկել սպառողների համար 7R-երի (վերանայել, հրաժարվել, կրճատել, վերաօգտագործել, վերամշակել, նորոգել և փոխարինել) իրագործումն առավել դյուրին դարձնելու համար:

Սպառողները կարող են և պետք է վերագնահատեն իրենց սպառման սովորությունները՝ նվազագույնի հասցնելով պլաստիկի օգտագործումը, հնարավորինս հրաժարվելով ավելորդ պլաստիկից, վերաօգտագործելով երկարեցնելով պլաստիկե ապրանքների կյանքի տևողությունը, հետևելով թափոնների վերամշակման կանոններին և այլն:

Որպես Սպառողների միջազգային կազմակերպության անդամ, Սպառողների ազգային ասոցիացիան ամբողջ աշխարհում գործունեություն ծավալող 200 այլ անդամների հետ կմիանա այս քարոզարշավին, կբարձրացնի սպառողների շահերի պաշտպանության ձայնն ամբողջ աշխարհում:



CONSUMERS INTERNATIONAL

ՄԱՐՏԻ 15-Ը՝ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ

Պլաստիկ անունով աղետը

Որքան հեշտանում է կյանքը պլաստիկի օգտագործմամբ, այնքան աղետալի վիճակում է հայտնվում մեր փոքրիկ մոլորակը: Հատկապես մեկանգամյա օգտագործման պլաստիկի արտադրությունն ու սպառումը խստորեն ազդում են էկոհամակարգի վրա՝ պատճառ դառնալով շրջակա միջավայրի անդառնալի փոփոխությունների, ինչն իր հերթին բացասական լուրջ հետևանքներով սպառնում է մարդու առողջությանը:

Դեռևս 2020 թվականի օգոստոսին լույս տեսած Pew Charitable Trusts & SYSTEMIQ-ի (Կոտրելով պլաստիկ ալիքը) զեկույցում ներկայացվել են տվյալներ, համաձայն որոնց, եթե հենց այս պահից սկսած չիրականացվեն պլաստիկի արտադրության, իրացման, սպառման ու վերամշակման քաղաքականության, նաև սպառողների վարքի հիմնարար փոփոխություններ, ապա մինչև 2040 թվականը պլաստիկ նյութերի հոսքն օվկիանոս կեռապատկվի:

Պլաստիկով աղտոտման դեմ պայքարը համաշխարհային մարտահրավեր է, որը պահանջում է համակարգված, լուծումներ: Որպես գլոբալ շարժման կարևորագույն մասնիկ, սպառողները կարող են և պարտավոր են որոշիչ դեր ունենալ այս խնդրի լուծման և պլաստմասսայի կայուն սպառման գործում:

Թեև համաճարակի ընթացքում մեկանգամյա օգտագործման պլաստիկի կիրառման ծավալներն ավելացան, այդուհանդերձ սպառողների՝ շրջակա միջավայրով մտահոգվածությունը չնվազեց: Նրանք ավելի ու ավելի են անհանգստանում պլաստիկ թափոնների հետևանքով ահագնացող աղտոտվածությունը կանխելու խընդրով, ուստի կոնկրետ քայլեր են ձեռնարկվում այս ուղղությամբ: 2019 թվականին անցկացված գլոբալ ուսումնասիրությունը պարզել է, որ հարցվածների.

- 82 տոկոսը մեկանգամյա օգտագործման պլաստիկ տարաները փոխարինել է բազմակի օգտագործման պարագաներով,
- 72 տոկոսը գնումներ կատարելիս նախընտրում է բազմակի օգտագործման պայուսակներ,
- 62 տոկոսն օգտագործում է բազմակի օգտագործման շշեր:





ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ



ՄՏԱՀՈԳԻՉ ՓԱՍՏԵՐ

1. Օվկիանոսները տարեկան ընդունում են մոտ 8 մլն տոննա պլաստիկ թափոն:

2. Տարեկան արտադրվող պլաստիկի 50 տոկոսը կազմում է մեկանգամյա օգտագործման պլաստիկ արտադրանքը:

3. Միայն վերջին 15 տարվա ընթացքում արտադրվել է աշխարհում երբևէ արտադրված պլաստիկի գրեթե կեսը:

4. Ենթադրվում է, որ մինչև 2050 թվականը օվկիանոսներում ավելի շատ պլաստիկ կլինի, քան ձուկ:

5. Ծովային պլաստմասսայով աղտոտվածությունից տարեկան ոչնչացվում են 100,000 ծովային կաթնասուն և կրիա, 1 մլն ծովային թռչուն:





2021 թ.
ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սպառողների ազգային ասոցիացիայի «50 լավագույն արտադրողներ» ծրագրի շրջանակում այս եռամսյակում ևս կատարված ուսումնասիրությունները վերաբերում են հացաբուլկեղենի, հրուշակեղենի, կաթնամթերքի, հյութերի և ըմպելիքների, պաղպաղակի, մսամթերքի, թռչնամսի և ձվի, ոգելից և ոչ ոգելից խմիչքների, խոհարարական կիսապատրաստվածքների, հանրային սննդի, նաև բուսական և կենդանական յուղերի արտադրման և իրացման ոլորտներին:

Այս եռամսյակում ուսումնասիրել ենք մոտ 300 մեծ ու փոքր առևտրային կազմակերպություն, մոտ 20 սննդի արտադրական ձեռնարկություն և 50-ից ավել հանրային սննդի կետեր:

ՀԱՑԱԲՈՒԼԿԵՂԵՆԻ, ԱԼՐԱՅԻՆ ԵՎ ՇԱՔԱՐԱՅԻՆ ՀՐՈՒՇԱԿԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Այս ոլորտը դարձյալ մշտապես մտահոգում է Ասոցիացիայի մասնագետներին, քանի որ շարունակվում է իրացվել անհայտ ծագման հաց ու հացաբուլկեղեն՝ չմակնշված արտադրողի, ալյուրի տեսակի, հացի քաշի ու խոնավության մասին (60-70 տոկոս): Հաճախ էժան ալյուրն օգտագործվում է թանկի փոխարեն: Խնդիրը մեզանում տարածում է գտել դեռևս խորհրդային տարիներին:

Երևանում օրական արտադրվում է 300-330 տոննա հաց, հետևաբար պատկերացնել կարելի է, թե որքան եկամուտ է ստացվում նման խախտումներով արտադրություն կազմակերպելիս:

Հացաբուլկեղենի շուկայում արտադրողների 1/5-ն է բարեխղճորեն կատարում իր պարտավորությունները, մնացածը շուկայում ներկայանում է մի շարք թերություններով:

Ալրային հրուշակեղենի շուկայում ևս իրացվում է անհայտ ծագման (չմակնշված կամ թերի մակնշված) արտադրանք, որը կազմում է իրացվող արտադրանքի մոտ քառորդ մասը:

Որոշ արտադրամասեր գործում են հակասանիտարական պայմաններում, ոչ բոլոր աշխատակիցներն են ժամանակին բուժզննում անցնում, և ոչ միշտ է հացաբուլկեղենի տեխնոլոգիական գործընթացն իրականացվում համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից: Հաճախ նաև ձեռք բերված հումքը չի ունենում համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ:

Հիշյալ թերացումներով շարունակում են գործել «Գեղամ Մուրադյան» («Գեղամա» ապրանքանիշ), «Հեկտոր Մանվելյան», «Միրաժ», «Ալվարդ Մարգարյան», «Լիզա Վարդանյան», «Վարդան և Մոնիկա», «Էդուարդ Մինասյան», «Սուսաննա Շահինյան», «Նիկոլայ Մելքոնյան», «Արմեն Հովհաննիսյան», «Վարազդատ Մանուկյան», «Տորթեր Մարինայից», «Էմ ընդ Կա», «Արմինաշող», «Կեսգիշեր» և այլ ընկերություններ:

ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Գրանդ Քենդի» ընկերությունը շաքարային և ալրային հրուշակեղենի արտադրության ոլորտում առաջատար է: Նրա ապրանքատեսականին լավագույններից է: Նա տարածաշրջանում շոկոլադի հումք կակաո ռունդերի ներկրողն է:

«Գրանդ Քենդի» ընկերության տեսականին ներառում է ավելի քան 400 անուն արտադրատեսակ, այդ թվում՝ սերուցքային, շոկոլադե, մրգային և այլ բնական հավելումներով պաղպաղակներ: Մեծ պահանջարկ ունեն հատուկ տոնական միջոցառումների համար նախատեսված պաղպաղակե տորթերը:

«Գրանդ Քենդիի» խմորեղենների տեսականին ներառում է մրգային, մեղրային, ընկուզային և շոկոլադե հավելումներով ավանդական տորթեր, քաշային և հատային խմորեղեն: Արտադրման ընթացքում օգտագործվում է բացառապես բնական թարմ հումք՝ սերուցքային կարագ, բարձրորակ ալյուր, հատընտիր ընկուզեղեն, թարմ հավկիթ, մեղր, թարմ մրգեր, բնական շոկոլադ, կակաո փոշի և այլն: Հատուկ հանդիսությունների համար առաջարկվում են «Ֆուրշեթ» հավաքածուները:



Ժամանակակից տեխնոլոգիաներով և իտալական սարքավորումներով հագեցած արտադրամասում արտադրվում է սուրճ, որի համար, որպես հումք, օգտագործվում են արաբիկա և ռոբուստա սուրճերի ամենաբարձրորակ տեսակները: Ընկերությունն արտադրում է նաև սառը սուրճ և 3

տեսակի սառը թեյ՝ դասական սև, կիտրոնով և դեղձի համով:

Հայկական շուկայում լավագույնն են «Գրանդ Քենդիի» կարամելի տեսականին (սառնաշաքարային, մրգային, կաթնային, ընկուզային, շոկոլադապատ և այլն), դրաժեի տեսականին (շոկոլադապատ և շաքարային ջնարակով պատված), շոկոլադե ջնարակով պատված մրգերի չրերը, պրալինե, վաֆլե և կրեմային շոկոլադե կոնֆետները, կոնֆետների ընտրանին, շոկոլադե սալիկները՝ պատրաստված բարձրորակ



կակաո-հումքից և բնական զանազան հավելումներից, դառը շոկոլադե սալիկների տեսականին՝ 60, 70 և 80 տոկոս կակաո մթերքի պարունակությամբ:

«Գրանդ Քենդիի» արտադրությունը սերտիֆիկացված է ISO 9001:2015 որակի կառավարման և ISO 22000:2005 սննդի անվտանգության կառավարման չափանիշերով: Ընկերության արտադրանքի առավելությունն ու բարձր որակի գրավականը բացառապես բնական հումքն է: Այն մանրազնին ստուգման է ենթարկվում նրա կենտրոնական լաբորատորիայում, որը հավաստագրված է ՀՍՏ ISO 17025:2005 ստանդարտի համաձայն: 2019 թվականին ընկերությունը սերտիֆիկատ է ստացել նաև սննդի արտադրանքի անվտանգության կառավարման FSSC 22000V4.1. ստանդարտներին համապատասխան:

«Գրանդ Քենդին» լայնորեն սպառվում է սեփական առաքման մանրամեծածախ ցանցի միջոցով՝ արտադրանքն առաքելով հանրապետության 7500 առևտրի կետեր: Գործում է 22 ֆիրմային խանութ, ինչի շնորհիվ ընկերության արտադրանքը միշտ թարմ է հասնում սպառողին:

ԿԱԹ-ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտում Սպառողների ազգային ասոցիացիայի մասնագետների կատարած մշտադիտարկման արդյունքներով ըստ իրացման ծավալների լավագույն տասնյակում կայուն տեղ են զբաղեցնում հետևյալ ընկերությունները.

- Աշտարակ-Կաթ ապրանքանիշ,
- Չանախ,
- Բանդիվան կաթ:

Փաստենք, որ հաճախ որոշ արտադրողներ կաթնայուղի փոխարեն ավելացնում են ավելի էժան բուսական յուղ՝ այդ մասին մակնշելով մանր տառերով (երբեմն ուղղակի նշվում է, որ օգտագործվել է բուսական յուղ) կամ ընդհանրապես չմակնշելով: Սա սպառողին մոլորեցնելու փորձ է, ուստի ևս մեկ անգամ հորդորում ենք գնել կաթնամթերք անարատ, առանց հավելումների ու փոխարինիչների կաթից:



ՄՍԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Մշտադիտարկման արդյունքներով լավագույն տասնյակում կայուն տեղ են զբաղեցնում հետևյալ ընկերությունները.

- **ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻ,**
- **ԱԹԵՆՔ,**
- **ԲԵԿՈՆ ՊՐՈԴՈՒԿՏՍ,**
- **ՑԱՐԻՑԻՆՈ**
  (Царский продукт ապրանքանիշ),
- **ԱՌԴԵԼԻԿԱՏԵՍ,**
- **«ԱՐՄ ՄԻԹ»**
  («Արմենիա մսամթերք» ապրանքանիշ),
- **ԲԱԲԻԿ 90**
  («Դի Ջի Միթ Ֆուդ» ապրանքանիշ),
- **ԼՈՒՄԱ:**

«50 լավագույն արտադրողներ» ծրագրի շրջանակում իրականացվող ուսումնասիրությունները վկայում են, որ շարունակվում է իրացվել ոչ բավարար որակի մսամթերք, որը չի համապատասխանում նորմատիվ պահանջներին: Օրինակ՝ «Շիրվանյան և ընկերներ», «Գայանե-Ջամե», «Կարինե-Նարինե», «Սոս» և այլ ընկերություններում ոչ պատշաճ սանիտարական վիճակ է, անձնակազմի բուժզննում չի կատարվում և այլն, իրենց հիմնականում ոչ բարձր որակի արտադրանքն իրացնում են հեռավոր մարզերում՝ օգտվելով սպառողների սակավ իրազեկվածությունից:

ՊԱՂՊԱՂԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական սպառողական շուկայում պաղպաղակի ոլորտում լավագույն արտադրողների շարքում են շարքում են հետևյալ ընկերությունները.

- **Գրանդ Քենդի,**
- **Pink Berry,**
- **Աշտարակ-Կաթ ապրանքանիշ**



ՓԻՆՔ ԲԵՐՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Պաղպաղակի այս բրենդը ստեղծվել է Հայաստանում 2013 թ.: «Փինք Բերրին» գրավել է լցնովի պաղպաղակի շուկան իր գերազանց, նուրբ համով և բարձրակարգ սպասարկմամբ:



Բնական, անարատ հումք, բարձրակարգ տեխնոլոգիաներ, իտալական ժամանակակից սարքավորումներ և յուրահատուկ փաթեթավորում, արդյունքում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան արտադրանք: Արտադրության մեջ ներգրավված բարձր որակավորում ունեցող մասնագետներն ապահովում են պաղպաղակի կատարյալ համը:

«Փինք Բերրին» առաջարկում է շուրջ 25 տեսակի պաղպաղակներ, որոնց շարքը պարբերաբար համալրվում է նոր տեսակներով:

Բրենդն ունի զարգացման և կատարելագործման լայն հեռանկարներ: 2020-ի մայիսին ընկերությունը մեկնարկեց նոր նախագիծ՝ «Փինք Բերրի» սրճարան-բուտիկը, որն իր տեսակի մեջ եզակի է: Յուրատեսակ դիզայներական և նորարարական լուծումներով այս սրճարանում յուրաքանչյուր հաճախորդ մասնակից է լինում իր նախընտրած պաղպաղակի և քաղցրավենիքների պատրաստման ու մատուցման գործընթացին:

ՍԱՆՖՈՒԴ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում յուղաճարպային բնագավառի առաջատար «Սանֆուդ» ընկերության տեսականին միակն է տարածաշրջանում, որը պատրաստված է բացառապես բնական ճարպերից ու յուղերից, չի պարունակում կոնսերվանտներ և խոլեստերին: Ընկերությունն առաջարկում է հալած բուսական խառնուրդի, սփրեդի, մարգարինի, խմորիչի լայն տեսականի՝ ներկայանալով Իմպերիա վկուսա, Ցարսկայա, Մասելկո, Սոնյաչնա Դոլինա ապրանքանիշերով: Բրիտանական ընկերության ուսումնասիրությունների արդյունքում «Սանֆուդն» արժանացել է միջազգային ISO:22000 ստանդարտի հավաստագրի:

Ընկերությունը համագործակցում է հայ և արտերկրյա արտադրողների հետ: «Սանֆուդի» արտադրանքն արտահանվում է Վրաստան, Ռուսաստան և ԱՄՆ:

Արդեն այս տարի «Սանֆուդը» շուկայում կներկայանա անակնկալներով՝ սպառողի դատին ներկայացնելով «Սանֆուդ» ապրանքանիշով մայոնեզ, կետչուպ և պետստանդարտին համապատասխան բնական կարագ:



ԹՌՉՆԱՄՍԻ ԵՎ ՁՎԻ ՈԼՈՐՏ



Ուրախությամբ փաստենք, որ օր-օրի ավելանում է սպառողական շուկայում իրացվող տեղական թռչնամսի տեսակարար կշիռը՝ մեր դիտարկումներով հասնելով 50-55 տոկոսի, և ձվինը՝ 100 տոկոսով: Առայժմ ձեռնպահ ենք մնում որևէ կազմակերպության անուն նշելուց, քանի որ դեռևս կասկածներ ունենք որակի հարցում:

Հայտնի է, որ թռչնակերը ներկրվում է հիմնականում արտերկրից, հետևապես գնահատել դրա որակական ցուցանիշները, դրանցում հորմոնների կամ հավելանյութերի առկայությունը հնարավոր չէ:

ՀՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԸՄՊԵԼԻՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Ցավոք, այս բնագավառը ռիսկային է, որովհետև գազավորված և զովացուցիչ ըմպելիքների, ինչպես նաև մի շարք հյութերի արտադրության մեջ շարունակում են օգտագործվել բազմաթիվ հավելանյութեր, սննդային ներկանյութեր, կայունացուցիչներ, փոխարինիչներ (ասպարտամ և այլն), որոնց մասին գրեթե չի մակնշվում:

Առայժմ մենք ձեռնպահ ենք մնում ոլորտի լավագույն տասնյակում ընդգրկել տեղական որևէ արտադրողի, քանի դեռ հրստակեցված չեն մակնշումն ու օգտագործվող հավելանյութերի թույլատրելիության չափը:

ՈՉ ՈԳԵԼԻՑ ԵՎ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Ոչ ոգելից խմիչքների բնագավառը շարունակում է մնալ որոշակի վերապահումներ ունեցող ոլորտ: Այսպես, գազավորված ըմպելիքների բաղադրությունը մեզ համար անընդունելի է, որովհետև ինքնարժեքը ցածր լինելու նպատակով օգտագործվում են համ, հոտ, բույր կամ քաղցրություն հաղորդող բազմաթիվ սինթետիկ նյութեր, ինչը նշանակում է, որ գազավորված ըմպելիքի մեջ բնական է միայն ջուրը:

Մրգահյութերից շատերի վրա երբեմն նշվում է 100 տոկոս բնական ցուցանիշը, ինչը ևս ընդունելի չէ:

Թեև մեր երկրում գործում են ոգելից խմիչքների ոլորտը վերահսկող կառույցներ, այդուհանդերձ գրանցվում են թունավորման դեպքեր՝ երբեմն, ցավոք, մահացու հետևանքով: Սպառողների ազգային ասոցիացիան խստորեն դատապարտում է նման դեպքերը, որոնց մեղավորները պատասխանատվության գրեթե չեն ենթարկվում:

Անկախ վերը նշվածից, փաստենք, որ ոլորտի լավագույն տասնյակում շարունակում են կայուն տեղ զբաղեցնել «Շամպայն գինիների գործարանը» և «Պռոշյանի կոնյակի գործարանը»:

ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ



Երևանի շամպայն գինիների գործարանում արտադրվում են շամպայն գինիների ողջ տեսականին ֆրանսիական տեխնոլոգիայով՝ դասականից մինչև հավաքածու, նաև 3-15 տարվա հնացման կոնյակներ: Համի և որակի գաղտնիքը միջազգային չափանիշերին համապատասխան արտադրության տեխնոլոգիան է, որակի հսկման լաբորատորիան, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող մասնագետները: Գինու արտադրության համար ընտրվում են ՀՀ տարբեր շրջաններում աճեցվող խաղողի լավագույն տեսակները:

Գործարանի արտադրանքը սերտիֆիկացված է: Տեսականին ներառում է՝ շամպայն (Հայկական շամպայն չոր, Հայկական շամպայն կիսաչոր, Հայկական շամպայն կիսաքաղցր, Կարմիր խաղուն գինի «Տիգրան Մեծ», Հայկական շամպայն կոլեկցիոն Բրյուտ, Հայկական շամպայն Կոլեկցիոն կիսաչոր), խաղողի գինիներ (Ֆրանս, Վայք Արենի, Նվարդ, Հարսանեկան, Հողի արյուն, Հայկ Նահապետ (Կարմիր կիսաքաղցր և Սպիտակ կիսաչոր), Վերածնունդ, Սպիտակ քիշմիշ կիսաքաղցր, Սև քիշմիշ կիսաքաղցր), մրգապտղային սեղանի կիսաքաղցր գինիներ (Նռան գինի, Մոշի գինի, Բալի գինի, Ազնվամորու գինի, Ելակի գինի, Սև հաղարջ, Միկադո (Սալորի կիսաքաղցր գինի), կոնյակներ օրդինար և տեսակավոր (Ֆրանս 3, 5, 7, 10, 15 տարիների հնության, Մենուա 3 տարեկան, Տրդատ 5 տարեկան, Гордость Армении 3, 5, 7, 10 տարիների հնացմամբ, Նարե 6, 10, 15 տարիների հնացմամբ):



ՊՌՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Գործարանում արտադրվում են 3-30 տարվա հնության հայկական կոնյակներ (Մանե, Պապ թագավոր, Շիրազ, Չարենց, Արծրունի, Արփինե, Վարդան Մամիկոնյան, Արմենուհի, Խենթ և այլն)՝ պատրաստված Արարատյան դաշտի խաղողի լավագույն տեսակներից, լիկյորներ ու նորագույն տեխնոլոգիաներով արտադրված լավագույն մրգային՝ նռան, սալորի, սև հաղարջի, բալի, ծիրանի, սերկևիլի, մոշի գինիներ: Գործարանի բարձրորակ արտադրանքն իրացվում է Հայաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում, Վրաստանում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Լեհաստանում և այլուր:

Այսօր պահանջված ու սիրված է նաև Պռոշյանի կոնյակի գործարանի հայկական ավանդական բաղադրատոմսերով պատրաստված «Ռոյալ» ապրանքանիշով պահածոյի տեսականին, որը մեծ պահանջարկ է վայելում նաև արտասահմանյան շուկայում: Տեսականին արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, Միացյալ Նահանգներ, եվրոպական և մերձբալթյան երկրներ, Ղազախստան:

Պռոշյանի կոնյակի գործարանի տեսականին բարձրորակ է, գեղեցիկ, համեղ, ինչն արդյունքն է պարբերաբար ներդրվող նորագույն տեխնիկական միջոցների, հմուտ և փորձառու մասնագետների աշխատանքի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ

Վերջին շաբաթներին ավելացել են հանրային սննդի կետերից օգտվողները, ինչը գովելի է, քանի որ դրական է անդրադառնում տնտեսվարողների ֆինանսական հոգսը թեթևացնելու վրա, սակայն նշենք, որ միաժամանակ պարունակում է ռիսկեր, ինչի պատճառը ոչ միայն համավարակն է, այլև սննդային թունավորումները:

Հանրային սննդի ոլորտին առնչվող կարգավորումները պիտի իրականացվեն «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի և նորմատիվային (ՀՍՏ 189, 2000, 2001 և այլն) դաշտի պահանջներին համապատասխան, ինչը ենթադրում է, որ պետք է նախապես ճշտվեն.

- ընդհանուր սանիտարական վիճակը,
- աշխատակիցների բուժզննման ժամանակին իրականացումը,
- արտադրող, սպասարկող անձնակազմի (խոհարար, բարմեն, մատուցող) համապատասխանությունն իրենց ներկայացվող պահանջներին,
- ձեռք բերվող մթերքներին ուղեկցող փաստաթղթերը,
- անհրաժեշտ առևտրա-տեխնոլոգիական սարքավորումների առկայությունը,
- օբյեկտի համապատասխանությունը ՇՉԿ գործող նորմերին:

Նշենք, որ հանրային սննդի շատ կետեր չեն ապահովում նշված պահանջների մեծ մասը: Թերացումներով աչքի են ընկնում հատկապես ԱՁ Գոհար Թորոյան «Խորտկարանը», «Կրիստալ» բար-կարաոկեն, Բաշ Ա-պարան ընկերության «Ապարան» բուֆետը, «Բալենի Ա. Կ.» խոհարարական խանութը, ԱՁ Էդուարդ Ղազարյան «Խորտկարանը», «Նոր թոնրատուն» և «Հացատուն» խորտկարանները, Մալաթիա շուկայի տարածքում գործող FAMILY FAST FOOD խորտկարանը:

Ցավալի է, որ հաճախ բացթողումներ են գրանցվում նաև շքեղ արտաքին ու կահավորանք ունեցող ռեստորաններում՝ «Զովունի», «Միրաժ», «Եվրոպա» և այլն:

Այդուհանդերձ մոնիթորինգային աշխատանքները շարունակվում են: Դրանց կարող են մասնակցել նաև սպառողները՝ կապ հաստատելով 010 24 92 04 հեռախոսահամարով:

ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գազ սպառող բաժանորդների ներտնային համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում, գազօգտագործող սարքավորումների կարգաբերում և վերանորոգում, արտահոսքի վերացում, ծխաօդատար համակարգի զննում, փականների քսայուղում, ձայնաազդանշանային անվտանգության համակարգի թեստավորում և այլն: Սրանք են «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերության նպատակն ու առաքելությունը (մանրամասն՝ էջ 16):

ՎԵՐԴԵ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԴԵ ընկերությունն օգտագործում է շրջակա միջավայրը չաղտոտող, անվնաս նյութեր և համագործակցում իտալական ու գերմանական FIRBIMATIC, Miele, PONY, Seitz, Kreussler, BUFA և այլ ընկերությունների հետ՝ իրականացնելով քիմիական և բնական մաքրում:

Այստեղ հնարավոր է հագուստն անջրանթափանց դարձնել, ինչն օգնում է պաշտպանվել ջրից ու ձյունից, հետևաբար լավ է դիմակայում կեղտաբծերին ու լաքաներին: Այս գործընթացն իրականացվում է Seitz գերմանական ընկերության նյութերով:

Վարագույրների մաքրման դեպքում ՎԵՐԴԵ-ի աշխատակիցները կօգնեն ձեզ հանել վարագույրները, իսկ դրանք մաքրելուց, արդուկելուց և փաթեթավորված տեղափոխելուց հետո անհրաժեշտության դեպքում նաև կկախեն:

Գորգերի մաքրումը նույնպես խորհուրդ է տրվում վստահել ՎԵՐԴԵ մաքրման սրահին: Եթե գորգը շատ հին է և հատուկ արժեք ունի, ապա սրահի փորձագետները կմաքրեն այն Green Earth տեխնոլոգիայով, ինչի արդյունքում գորգը չի վնասվի և լիովին կպահպանի իր գույնն ու որակը:



ՎԵՐԴԵ սրահում նրբորեն ու խնամքով մաքրվում են նաև հարսանյաց և երեկոյան զգեստները: Այս դեպքում օգտագործվող հատուկ նյութերը չեն վնասում զգեստը՝ պահպանելով զարդարանքն ու գործվածքները:

Սրահն իրականացնում է այնպիսի թավշյա, կաշվե ու մորթե իրերի մաքրում, ինչպիսիք են վերարկուները, բաճկոնները, կոստյումները, ժիլետները, տաբատները, ձեռնոցները և այլն:

ՎԵՐԴԵ մաքրման սրահն իրականացնում է կաշվե հագուստի և իրերի ներկում: Գունապնակն ընդգրկում է 1000-ից ավելի գույներ, ինչը թույլ է տալիս ինչպես լիովին

փոփոխել կաշվի գույնը, այնպես էլ այն դարձնել մեկ երանգով բաց կամ մուգ:

www.verde.am կայքում ներկայացված են բոլոր ծառայությունների գնացուցակը և մանրամասն նկարագրումը:

ՎԵՐԴԵ սրահն իրականացնում է նաև առաքում: Հագուստը պատվիրատուի նախընտրությամբ փաթեթավորվում է ծալած կամ հատուկ կախիչներով:

ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՑԱՆՑ

Կենցաղային էլեկտրասարքավորումներ ներկրող ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ խոշոր ընկերության բոլոր խանութները հագեցած են ամենաորակյալ, նորագույն սարքավորումներով, բազմազան ապրանքանիշերով: Վաճառասրահներ գործում են նաև մարզերում, ինչի արդյունքում Գյումրիում, Աբովյանում, Էջմիածնում, Հրազդանում, Արցախում, Սևանում և այլուր սպառողը կարողանում է ձեռք բերել որակյալ տեխնիկա:

Իրենց ապրանքանիշերը ներկայացնելու բացառիկ հնարավորությունը ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ-ին են վստահել աշխարհահռչակ ՀԱՅՍԵՆՍ, ՍՈՆԻ, ԴԵԼՈՆԳԻ, ՍԱՄՍՈՒՆԳ և այլ խոշոր ընկերություններ: Ընկերությունը հանդես է գալիս նաև ՎԻԿԱՍ սեփական ապրանքանիշով: Գնումներ կարելի է կատարել նաև առցանց թե՛ ապառիկ, թե՛ կանխիկ



վճարումով և ստանալ հնարավորություն մասնակցելու Mercedes Benz ավտոմեքենայի խաղարկությանը:

Անհատական մոտեցում յուրաքանչյուր հաճախորդին, կուտակային քարտեր և զեղչային ճկուն համակարգ, ավտոմեքենայի ամենամսյա խաղարկություն, անվտանգ առաքում. ահա այն ամենը, ինչ ունի սպառողը ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ-ի շնորհիվ:

ԷԼԲԱՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



2011 թ. Quality Austria ավստրիական կազմակերպության կողմից Որակի կառավարման համակարգի ISO 9001:2008 միջազգային սերտիֆիկատի արժանացած հայ-գերմանական «Էլբատ» ընկերությունն արտադրում է կապարաթթվային կուտակչային մարտկոցներ տարբեր ավտոմեքենաների համար: «Էլբատ» ընկերությունը, հիմնվելով իր փորձի և շուկայի պահանջարկը ճիշտ գնահատելու կարողության վրա, ընդլայնել է իր արտադրանքը՝ առաջարկելով գերհզոր և անխափան էլեկտրական սնուցման ծառայություն և հուսալի սնուցման համակարգ: Ընկերության մասնագետները տեղադրում են առցանց UPS DC/AC կայաններ, այն է՝ ռեզերվային սնուցման արտաքին համակարգ, վաճառում և տեղադրում UPS համակարգերի լայն տեսականի, ինչպես նաև Valve կարգավորվող առաջատար և արդյունավետ մարտկոցներ (VRLA):

«Էլբատի» ծառայությունները ներառում են.

- տեխնիկական աջակցություն,
- վերջնական նախագծերի կառավարման ծառայություններ,
- վերանորոգում արտակարգ իրավիճակներում,
- վերլուծություն տեղում և համակարգի հզորության փորձարկում:

Ի դեպ, գործում է նաև ընկերության առցանց խանութը: Անհրաժեշտ է այցելել ընկերության կայքէջ (www,elbat.am), առցանց խանութ բաժինը, ընտրել մեքենային համապատասխան մարտկոց, լրացնել անհրաժեշտ տեղեկատվությունը և սպասել մասնագետի արձագանքին:

Ընկերության մարտկոցներն ունեն երաշխիքային և հետերաշխիքային սպասարկում:



րանքներից մաքրելու խնդիրն արդիական է հատկապես վերջին շրջանում՝ պայմանավորված քաղաքական պատճառներով: Թուրքիայից մեր երկիր հիմնականում ներմուծվում են շինանյութ, հագուստ, մրգեր, բանջարեղեն, սարքավորումներ, պարարտանյութեր, մաքրող միջոցներ և այլն:

Նման ապրանքները բոյկոտելն այսօր նախ և առաջ քաղաքական որոշում է, ապա նաև ազգային անվտանգության և արժանապատվության հարց, միայն թե խընդիրը պիտի կարգավորվի խելամիտ եղանակներով՝ չվնասելու համար ներմուծմամբ ու վաճառքով զբաղվող տնտեսվարողներին, որոնց մեծ մասի համար այդ գործընթացը հաճախ մի ամբողջ ընտանիքի հացի խնդիր կարող է լուծել: Սպառողներին մասնավորապես հորդորում ենք չգայթակղվել ներկրված մթերքների էժան գներով: Հայ հողագործների աճեցրած մթերքների գինը պայմանավորվում է մեր երկրում բարձր հարկերով, էներգակիրնե-

կան այլ աշխատանքների համեմատաբար բարձր գներով:

Հարկավոր է առաջին հերթին հրաժարվել ներկրվող այնպիսի ապրանքներից, որոնց արտադրությունը կարելի է կազմակերպել, իսկ որոշներինն արդեն կազմակերպվում է Հայաստանում: Օրինակ՝ տրիկոտաժը, կոշկեղենը և այլն: Եթե Թուրքիան, ասենք, կոշիկ արտադրելու համար հումքը ներմուծում է Չինաստանից, ինչու նույնը չի կարող անել նաև Հայաստանը:

Իհարկե, կարճ ժամկետում հնարավոր չէ թուրքական ապրանքների ողջ տեսականին ամբողջությամբ փոխարինել տեղականով, հետևաբար պետք է այլ ճանապարհ գտնել, մասնավորապես՝ հարկավոր է գործակցել այլ երկրների հետ, որոնց արտադրանքը գոնե գնային չափանիշերով մոտ կլինի թուրքականին: Կարելի է սկսել հենց հարևան Իրանից կամ էլ Ռուսաստանից ու Չինաստանից:

Ինչու է խնդիրն այդքան հրատապ

1. Թուրքական ապրանքների ներմուծման արգելքով դադարեցվում է հայկական միջոցներով թուրքական բյուջեի սնուցումը: Ի դեպ, թուրքական բյուջեի հարստացումը ենթադրում է հենց Հայաստանի դեմ կիրառվող զենքի գնում:

2. Կարևորվում է տնտեսական անվտանգության խնդիրը, քանի որ մի երկիր, որ դարեր շարունակ ամեն քայլի դիմում է հայերին բնաջնջելու համար, իր նպատակն իրականացնելու ճանապարհին չի բացառվում, օրինակ, որ թունավորի Հայաստան արտահանվող սննդամթերքը:

3. Երրորդ երկրների միջոցով հատկապես թուրքական ապրանքներ ներմուծելիս պետք է կատարել սերտիֆիկացում (լաբորատոր և այլ հետազոտություններ), եթե անգամ տվյալ ապրանքն արդեն սերտիֆիկացվել է արտահանող երկրի կողմից:

Անդրադարձ անցյալին

Մոտ 15 տարի առաջ Թուրքիայից մեր երկիր ներմուծվեց ձվի մեծ խմբաքանակ, որում հայ մասնագետների, մասնավորապես՝ Սպառողների ազգային ասոցիացիայի և Հայաստանի Սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ անդամ, Կենսաբանական գիտությունների թեկնածու Ժենյա Հարությունյանի համառ ջանքերով լաբորատոր հետազոտման ոչ ավանդական մեթոդով հայտնաբերվեց ալդրինի մեծ քանակ՝ 1.8-2.0մգ/կգ: Սա նշանակում է, որ առնվազն 5 ձու ուտելու հետևանքով կարող է առաջանալ ոչ միայն թունավորում, այլև գրանցվել մահ: Այս գործընթացից հետո պետական մարմինների հետ երկար բանակցությունների արդյունքում ամբողջ խմբաքանակը վերադարձվեց արտահանող երկիր՝ Թուրքիա, որը, իհարկե, փորձեց ինչ-որ կցկտուր մեկնաբանություններ անել: Ըստ վերջիններիս՝ այդ նյութով իբր ոջլաթափվում են հավերը, և իբր պատահաբար որպես սերմացու մշակված գարին օգտագործվել է որպես թռչնակեր: Բնականաբար, հարցին, թե ինչ գործ ուներ սերմացուն թռչնաֆաբրիկայում, պատասխան չտրվեց:

Գրեթե նույն ժամանակահատվածում արդեն անհատների կողմից ներկրված նռան խմբաքանակը ևս անվտանգ չէր, քանի որ այս անգամ մրգի պտղակոթում հայտնաբերվեց մեծ քանակով ԴԴՏ, որի հետևանքները ևս անդառնալի են անգամ չնչին քանակի ընդունման դեպքում: Այս օրինակներից մեկ հետևություն կարելի է անել, որ պարբերաբար կրկնվող դեպքերը չեն կարող պատահականություն լինել:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քանի որ այս պահին հնարավոր չէ իսպառ բացառել թուրքական արտադրանքի իրացումը մեր երկրում, կոչ ենք անում հետևողական լինել գնումներ կատարելիս, տվյալ պահին այլընտրանքի բացակայության դեպքում, նմանատիպ ապրանք գնելիս, մանրամասն ծանոթանալ ՀՀ-ի կողմից տրամադրված սերտիֆիկատին, որի առկայությունը պարտադիր է, նաև մակնշմանը, հատկապես եթե գնումներ արվում են երեխաների համար: Ընդամենը վերջերս Սպառողների ազգային ասոցիացիային հասցեագրված դիմում-բողոքներից մեկում ահազանգվում էր ադրբեջանական արտադրության մանկական կերի մասին, որի օգտագործումն աղետի կարող է վերածվել: Եվ վերջապես, անգամ առավելագույն անվտանգության դեպքում, ինչպե՞ս կարելի է հայ երեխային կերակրել ադրբեջանական արտադրության սննդով:

Հ. Գ.

Փաստենք, որ այլ երկրներ ևս տարբեր պատճառներով բոյկոտում են թուրքական ապրանքները: Օրինակ՝ գրանցելով բուսասանիտարական նորմերի խախտումներ, Ռուսաստանն արգելել է Թուրքիայից ներկրված մոտ 160 տոննա մրգի մուտքը իր շուկա: Թուրքական ընկերությունների հետ գործակցությունը դադարեցնելու կոչով հանդես է եկել նաև Սաուդյան Արաբիան և այլն:

Այսօր արդեն այս երկրների շարքը, թեկուզ ժամանակավոր համալրում է նաև Հայաստանը, որը երբեք և ոչ մի իրավիճակում իրավունք չունի կորցնելու զգոնությունը հարևան երկրների հետ քաղաքական և անպայման նաև տնտեսական հարաբերություններ ձևավորելիս: Հատկապես այս օրերին պարտավորություն ունենք ազգովի առավելագույնս ուժեղ ու պայքարի պատրաստ լինելու հանուն մեր 5000-ից ավել զոհերի, հաշմանդամություն ունեցող ավելի քան 10000 զինվորների, անհետ կորածների ու, ցավոք, նաև գերիների:

«ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Այսօր «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ն գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, ունի 15 տարածքային և 36 տեղամասային ծառայություններ, որոնք սպասարկում են ավելի քան 700 հազար բնակիչ-բաժանորդների և մոտ 6000 բաժանորդ-կազմակերպությունների: Յուրաքանչյուր ամիս հանրապետության ողջ տարածքում իրականացվում է ավելի քան 100 հազար բաժանորդի ներտնային գազասպասարկման համակարգերի տեխնիկական սպասարկում: Ընկերության գործունեության ոլորտը ներառում է բնակարանների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկումը, կենցաղային օբյեկտների տեխնիկական սպասարկումը, արտադրական նշանակության օբյեկտների տեխնիկական սպասարկումը, գազօգտագործող սարքավորումների վերանորոգումը և կարգաբերումը, գազափնտրիչ սարքերի արտադրությունը (LD - 1M), ձայնաազդանշանային անվտանգության համակարգի վերանորոգումը, ընկերության աշխատակիցների ուսուցումը և վերապատրաստումը:

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ն կրկին հորդորում է մշտապես պահպանել բնական գազից անվտանգ օգտվելու կանոնները: Գազասպառման համակարգի տեխնիկական պայմանների խախտումները, ինքնաշեն վառարանների տեղադրումը, գազասարքերի ինքնուրույն տեղափոխումը և Ընկերության փականագործի արձանագրած այլ



խախտումները չվերացնելը կարող են դժբախտ պատահարի պատճառ դառնալ: Բնակչին թունավորումից և գազի արտահոսքի հետ կապված այլ վտանգներից պաշտպանելու նպատակով «Գազպրոմ Արմենիա» ընկերությունն իր աշխատակիցների միջոցով տարածում է «Ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման» ուղեցույցներ և կոչ անում անպայման կարդալ և առաջնորդվել ուղեցույցում առկա տեղեկատվությամբ և հրահանգներով:

Ուղեցույցը ներկայացնում ենք ստորև

ՀՀ տարածքում ներտնային գազասպառման համակարգի անվտանգ շահագործման և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (այսուհետ՝ Մատակարար) հանձնարարությամբ բաժանորդների ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման (այսուհետ՝ ՆՏԳՍՀ ՏՍ) ծառայության աշխատանքներն իրականացվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 15.10.2014թ. №383 Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ)» պայմանագրի հավելված №2՝ «ՆՏԳՍՀ ՏՍ ծառայությունների մատուցման մասին» Համաձայնագրի դրույթների համաձայն, պլանային կարգով՝ տարեկան առնվազն երկու անգամ պարբերականությամբ, ինչպես նաև արտապլանային՝ բաժանորդների կանչերով՝ «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Սպասարկող) կողմից:

Փականագործը պարտավոր է

- ներկայանալ բաժանորդին անձը հաստատող վկայականով, դիտարկել գազիֆիկացման վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը, փաստացի գազահամակարգը համեմատել նախագծի հետ և իրականացնել ՆՏԳՍ համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն,
- ստուգել և ապահովել գազասարքերի, ծխաօդատար համակարգի (ծխատար և օդատար ուղիներ, ծխատար խողովակներ, վերնափեղկ, օդի ներհոսքի բացվածք) ու գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային համակարգի (ձայնաազդանշանային սարք և գազամատակարարման ընդհատման ավտոմատ փակող կափույր, այսուհետ՝ ՁԱ համակարգ) միացումների ճշտությունը և ամբողջականությունը, սահմանված կարգով կատարել դրանց տեխնիկական սպասարկումը,
- բաժանորդներին հրահանգավորել՝ ներտնային գազահամակարգում բնական գազից անվտանգ օգտվելու պահանջների վերաբերյալ,
- ՆՏԳՍ համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման ԱԿՏ-ում բաժանորդի հետ համատեղ հավաստել ծառայության մատուցման իրականացումը, ՆՏԳՍ համակարգում թերությունների խախտումների հայտնաբերման դեպքում կազմել համապատասխան արձանագրություն, գազասարքն անջատել, խցանային փականը խցափակել և կնքել, բաժանորդին իրազեկել արձանագրված խախտումների վերացման հնարավոր տարբերակների և ժամկետների վերաբերյալ:



ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԳՈՆՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժանորդ
Դժբախտ դեպքերից զերծ մնալու համար պահպանեք կենցաղում բնական գազից անվտանգ օգտվելու պահանջները՝

- **առանց հսկողության մի՛ թողեք անվտանգության ավտոմատ համակարգեր չունեցող գործարկված գազասարքերը, դրանց երկարատև շահագործման ընթացքում հաճախակի օդափոխեք շինությունը,**
- **հնարավորության դեպքում լողասենյակներում տեղադրված ջրատաքացուցիչները տեղափոխեք խոհանոց կամ դրա համար նախատեսված այլ շինություն (սենք),**
- **ՆՏԳՍ համակարգում փոփոխություններ կատարելու, գազասարքերի փոխարինման, վերատեղադրման կամ դրանց անսարքությունների վերացման համար դիմեք Մատակարարին կամ Սպասարկողին:**

ՉԻ՛ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ



- **անջատել գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային ավտոմատ սարքը էլեկտրասնուցումից (ազդանշանիչի էլեկտրաէներգիայի ծախսը տարեկան կազմում է ընդամենը՝ 8,64 կՎտ, շուրջ 400 դրամ),**
- **ինքնակամ փոխարինել, նորոգել և տեղափոխել գազասարքերը,**
- **գազօջախներն օգտագործել ջեռուցման նպատակով: Դրանց վրա տեղադրել մեծ մակերեսով կաթսա կամ թիթեղ՝ առանց հավելյալ տակդիրի, քանի որ սահմանափակվում է այրման համար անհրաժեշտ օդի ներհոսքը, զարգանում թերայրում (շմոլ գազի առաջացում),**
- **օդատար ուղիներին միացնել օդաքարշ կամ ծխատար, դրանք փակել լաթով կամ այլ առարկաներով,**
- **փակել օդափոխության ու գազի այրման համար անհրաժեշտ օդի ներհոսքի նպատակով նախատեսված՝ դռան տակի բացվածքը,**
- **սահմանափակել ծխահեռացման ուղիների անցողունակությունը (քարշը), օգտագործել ծալքավոր նրբաթիթեղյա խողովակներ և այլ խոչընդոտներ:**


Կրկին հորդորում ենք անվտանգության սարքերը 24 ժամ շարունակ միացված պահել, ինչը

Արգելվում է օգտվել գազասարքերից, եթե.



- գազասարքն անսարք է, գազն այրվում է անկայուն կամ դեղնակարմրագույն (մրոտ) բոցով, կամ այն խզվում (կտրվում) է այրիչից,
- գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային ավտոմատ համակարգը չի աշխատում կամ անսարք է,
- ծխաօդատար համակարգում բացակայում է քարշը կամ առաջացել է ետքարշ,
- ձայնային ազդանշանի միացման դեպքում անհապաղ օդափոխել շինությունը և զանգահարել 1-04 հեռախոսահամարով:

Խորհուրդ չի տրվում




- օգտվել ծխատարով ջրատաքացուցիչներից և ջեռուցման սարքերից՝ թանձր մառախուղի, ուժեղ քամիների և տարվա առավել շոգ եղանակների ժամանակ,
- գազօջախները և ծխատարով գազասարքերն օգտագործել օդորակիչների (кондиционер) հետ համատեղ:

Անհրաժեշտ է

- ծխատարով ջրատաքացուցիչները և ջեռուցման սարքերը միացնելուց առաջ և միացնելուց մինչև 5 րոպե հետո լուցկու բոցի մոտեցման եղանակով ստուգել ծխատար ուղիներում քարշի առկայությունը,
- առատ ձյան և ուժեղ քամիների դեպքում հաճախակի ստուգել ծխատար խողովակի արտաքին մասի ամբողջականությունը և մաքրել գլխամասը:

Արգելվում է

1. Անջատել անվտանգության ազդանշանային համակարգը:
2. Կատարել գազահամակարգի ինքնակամ փոփոխություններ:



Գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային սարքի ազդանշանի՝ բնակարանում գազի հոտ զգալու, արտահոսքի, գազասպառման հետ կապված՝ բնակիչների առողջական վիճակի վատթարացման (թունավորում, հրդեհ և այլն) կասկածների կամ այլ վթարային իրավիճակներում.

- անհապաղ զանգահարել շուրջօրյա գործող գազի վթարային ծառայություն՝ 1-04, կամ ԱԻՆ՝ 9-11 հեռախոսահամարներով,
- չծխել, չօգտվել բաց կրակից կամ կայծ առաջացնող որևէ միջոցից, չմիացնել և չանջատել էլեկտրասարքավորումները,

- փակել գազասարքերի և սնող գազախողովակների խցանային փականները, բացել դռները և պատուհանները, օդափոխել շինությունը,
- զգուշացնել ընտանիքի անդամներին և հարևաններին, նրանց հանել անվտանգ և չգազավորված տարածք:

Գազի մուտքը բնակարան անվտանգության ավտոմատ կափույրի միջոցով փակելու դեպքում արգելվում է ինքնակամ գործարկել այն՝ առանց վերացնելու վթարային ազդանշանի պատճառը:

Ձեր բնակարանի գազամատակարարումը կդադարեցվի, եթե.

- խոչընդոտեք ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, անսարք գազասարքի անջատման, խցանային փականի խցափակման և կնքման աշխատանքներին,
- պոկեք խցափակման կնիքը և ինքնակամ միացնեք գազասարքը:

Ներտնային գազասպառման համակարգի պատշաճ վիճակի պահպանման համար պատասխանատվություն է կրում բաժանորդը:



ՀԻՇԵ՛Ք, ՈՐ

Շմոլ գազի 0.4-0.5 % առկայությունը շինությունում 10-15 րոպեի ընթացքում մահացու է:

Մի՛ մոռացեք, որ վթարի ժամանակ վտանգի եք ենթարկվում ոչ միայն դուք, այլև ձեզ շրջապատող մարդիկ: Պահպանե՛ք ձեր առողջությունը և կյանքը:

ԵՎ ՀԻՇԵ՛Ք
Ժամանակին մասնագետներին դիմելը կօգնի ճիշտ ժամանակին հայտնաբերել խնդիրը, լուծել և հաղթահարել այն:







ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԿԱՄ
ԱՐՏԱԴՐՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ







Ցանկացած երկրի տնտեսությունը տվյալ երկրի անվտանգության հիմնասյունն է, իսկ տնտեսության զարգացումը նախ և առաջ սկսվում է տեղական արտադրության զարգացմամբ, արտադրանքի ծավալների և իրացման ընդլայնմամբ:

Վաղուց արդեն կոտրված է կարծրատիպը, թե հայրենական արտադրանքը զիջում է արտասահմանյանին:

Հաճելիորեն փաստենք, որ վերջին շրջանում ավելացել է այն սպառողների թիվը, որոնք նախապատվությունը տալիս են տեղական արտադրանքին, մասնավորապես սննդի ոլորտում, թեև տեղական հագուստը, կոշկեղենը և կենցաղային տեխնիկան ինչ-որ չափով դեռևս զիջում են արտասահմանյան արտադրանքին:

Մասնավորապես սննդի ոլորտում (հաց-հացամթերք, կաթնամթերք, մսամթերք, ալրային ու շաքարային հրուշակեղենի արտադրություն և այլն) հայ արտադրողները կարևորում են նորագույն տեխնոլոգիաների կիրառումը՝ միջազգային շուկայում մըրցակցությանը դիմանալու նպատակով:

Գերակա խնդիրների թվում է հատկապես հումքի արտահանումից անցումը պատրաստի արտադրանքի արտահանման:

Այսօր Հայաստանում զարգացած է նաև օրգանական հողագործությունը, որը պահպանում է հողի, էկոհամակարգերի և մարդկանց առողջությունը, նաև կենսաբազմազանությունը՝ բացառելով կամ գոնե սահմանափակելով անցանկալի կողմնակի ազդեցություններ ունեցող նյութերի օգտագործումը:

Հայկական շուկա նոր չափանիշերով է վերադառնում հայրենական տեքստիլ արտադրանքը, ինչի արդյունքում ոչ միայն կրճատվում է ներմուծվող տեքստիլի ծավալը, այլև հայ արտադրողը հնարավորություն է ստանում արտահանելու իր արտադրանքը: Եվ ուրեմն նպաստավոր պայմաններով ստեղծվում են աշխատատեղեր բարձրակարգ հայ մասնագետների համար, հետևաբար գրանցվում է արտագաղթի թվի կրճատում:

Հայալեզու պիտակով մանկական, կանացի և տղամարդկանց կոշկեղենն իր հերթին պահպանում է արտադրանքի որակական բոլոր չափանիշերը, ինչին հասնել հնարավոր է միայն բարձրորակ հումքի և էկոլոգիապես մաքուր ներկանյութերի շնորհիվ: Եվ, վերջապես, Հայաստանում վաղուց արդեն հնարավոր է կրել տեղական արտադրության որակյալ և ոճային հագուստ, ասել է թե՝ ունենալ հայկական կերպար ամբողջությամբ տեղական արտադրանքից: Հպարտությամբ նշենք, որ խորհրդային տարիներին մեծ ծավալներով արտահանվում էր հատկապես հայկական արտադրության կողկեղենը, որը միջազգային շուկայում մրցունակ էր և՛ որակով, և՛ դիզայնով:

Հայրենական արտադրանքի առավելությունները

- որակյալ են,
- ինքնատիպ են, անգամ եթե ստեղծվում են արտասահմանյան ընկերությունների հետ համագործակցության արդյունքում,
- ձեռնարկությունների մեծ մասն ունի սեփական արտադրամասեր, և միայն որոշ պահեստամասեր են բերվում արտերկրից, ինչը թույլ է տալիս սահմանել վերջնական արտադրանքի հնարավորինս խելամիտ գին,
- տեղական արտադրողները հարմարվում են տեղական շուկայի պայմաններին ու պահանջարկին,
- ներքին շուկան այսօր արագորեն աճում ու զարգանում է՝ շնորհիվ երիտասարդ մասնագետների ներգրավվածության:

Եթե յուրաքանչյուրս գնենք տեղական արտադրանք, կնպաստենք մեր երկրի տնտեսության կայունացմանն ու զարգացմանը հատկապես այս ժամանակաշրջանում, երբ երկրի տնտեսությունը մեղմ ասած նահանջ է ապրում երկարատև կարանտինից, ապա նաև պատերազմի ողբերգական հետևանքներից հետո:

Համացանցն ու երեխան

Համացանցը վաղուց ակտիվորեն մտել է ժամանակակից մարդու կյանք՝ անկախ տարիքից: Համակարգչի առջև նստած երեխաներն ու պարեցներն այլևս ոչ ոքի չեն զարմացնում:
Բայց կա մի բայց, որ ոչ մի պահ չպիտի դուրս մնա մեր ուշադրությունից՝ համացանցը բարեկամ և թշնամի է հավասարաչափ:

Երեխաների անվտանգությունը ծնողների համար ամենակարևոր խնդիրներից է: Տարբեր տարիքներում սպառնալիքները տարբեր են: Իհարկե, համացանցը լրացուցիչ տեղեկատվության աղբյուր է յուրաքանչյուրի համար, նաև հնարավորություն՝ հաղորդակցվելու և առցանց գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու: Շատ ծնողներ ձգտում են ամեն կերպ պաշտպանել իրենց երեխային՝ սահմանելով սոցիալական ցանցերի, խմբային զրույցների և այլնի օգտագործման լիակատար արգելք: Բայց քանի որ սա այնքան էլ իրատեսական չէ, մնում է մի ելք՝ սահմանել համացանցից անվտանգ օգտվելու կանոններ, սովորեցնել դրանք երեխաներին՝ միաժամանակ ուշադրությունից դուրս չթողնելով նրանց:

Անցանկալի բովանդակություն

Երեխան պիտի տեղեկացված լինի, որ համացանցում տեղադրված



ոչ բոլոր տեղեկություններին, այդ թվում՝ գովազդներին, կարելի է վստահել: Կարևոր է, որ ցանկացած նոր կայքում գրանցվելուց առաջ նա խորհրդակցի ծնողների հետ և քննարկի հնարավոր վտանգները:

Կասկածելի շփումներ

Հարկավոր է բացատրել երեխային, որ համացանցում մշտապես բաց լինելը նման է առանց դռան տան, ուր ով ասես կարող է մուտք գործել, այդ թվում՝ կասկածելի մտադրություններ ունեցողները: Հետևաբար ցանկալի



է, որ երեխան շփվի միայն իրական ծանոթների ու ընկերների հետ: Նա հստակ պիտի իմանա, որ համացանցից նույնքան ազատ օգտվում են նաև խաբեբաներն ու կասկածելի վարք ունեցողները, որոնք պատրաստ են ամեն հնարք բանեցնել դիմացինի վստահությունը շահելու, ապա նրան տարբեր փորձությունների մեջ ներքաշելու:

Կեղծ տեղեկատվություն

Երբեք չի կարելի բացառել, որ երեխան կարող է շփվել մի մարդու հետ, որը կեղծում է անունը, տարիքը և բնականաբար հանդես է գալիս ոչ անձնական լուսանկարներով: Հետևաբար անծանոթներին կուրորեն հավատալը ճիշտ չէ:

Ավելորդ գնումներ

Առցանց անվտանգության վերաբերյալ ամենակարևոր խնդիրներից է առցանց առևտուրը: Երեխան պիտի հրաժարվի ինքնուրույն գնումներ կատարելուց, բանկային քարտի տվյալներ մուտքագրելուց անգամ ամենավստահելի կայքում:

Եթե դեռահասն իր տրամադրության տակ արդեն ունի անձնական քարտ և գումար, ծնողը պարտավոր է մանրամասն քննարկել հնարավոր վտանգներն ու կանխել խաբեությունը:

Համակարգչային վիրուսներ

Երեխան պիտի իմանա, թե ինչպես են վիրուսները վնասում համակարգիչը: Անհրաժեշտ բացատրել, որ ցանկացած ծրագիր ներբեռնելուց առաջ պետք է խորհրդակցել մեծերի հետ: Ցանկացած անհայտ ձևաչափի կցորդ լավ է անմիջապես ջնջել և դատարկել աղբարկղը:

Նախքան համացանցով ստացած որևէ ֆայլ բացելը (նույնիսկ ծանոթ աղբյուրից) անհրաժեշտ է ստուգել դրանում վիրուսների առկայությունը:

Համակարգիչն ու առողջությունը

Որքան էլ որ համակարգիչն ունի դրական ազդեցություն ընդհանուր զարգացման, տրամաբանության և մտածողության վրա ընդհանրապես, այնուամենայնիվ, չափազանց շատ օգտագործվելու դեպքում կարող է պատճառ դառնալ առողջական խնդիրների, օրինակ՝ տեսողության խանգարման, երկարատև հոգնածության, գլխացավի կամ գըլխապտույտի, երկար նստելու հետևանքով առաջացած՝ պարանոցի, մեջքի, ձեռքի մկանների ցավի:

Սթրեսածին են նաև համակարգչային խաղերը, հատկապես եթե պարունակում են դաժանություն, արյուն, սարսափ և այլն:

Ուշադրություն

1. Համացանցից օգտվելիս պետք է հոգ տանել ինչպես անձնական, այնպես էլ ընտանիքի գաղտնիության մասին:

2. Չի կարելի տարածել կարևոր տեղեկություններ, նաև անձնական տվյալներ, որոնք ինչ-որ պահի կարող են օգտագործվել հենց ձեր դեմ:



3. Պետք է զերծ մնալ բամբասանքից ու զրպարտությունից:

4. Ցանկացած մեծահասակի խորհուրդ է տրվում պարբերաբար վերահսկել կայքի այցելությունների և հարցումների պատմությունը, ինչը կօգնի մատը պահել զարկերակին և հնարավորինս կանխել համացանցային փորձությունները:



ԵԹԵ ՏԱՌԱՊՈՒՄ ԵՔ ԱՆՔՆՈՒԹՅԱՄԲ

Մոդրակի յուրաքանչյուր երրորդ բնակիչը տառապում է անքնությամբ: Թեև նման հանգարտումը չի համարվում հիվանդություն, սակայն քնի կանոնավոր հանգարտումները կարող են լուրջ առողջական խնդիրներ առաջ բերել:

Շաբաթվա ընթացքում երեք անքուն գիշեր անցկացնելն արդեն ահազանգ է օրգանիզմի կողմից: Մասնագետները պնդում են, որ անքնությունն առաջանում է, երբ խախտվում է մարմնի կենսաբանական ժամացույցի աշխատանքը: Անքնության տարածված պատճառներից են մարմնի ջերմաստիճանը, սովորությունները, սթրեսը, տարբեր հիվանդություններ և այլն: Քնի խնդիրները կարող են փոխանցվել նաև գեներով:

Ինչ անել

Քնի խանգարումներ ունեցողներին խորհուրդ է տրվում ձևավորել ճիշտ ռեժիմ, ընդունել առողջ սնունդ, ունենալ քնելու հարմարավետ պայմաններ, խուսափել վատ սովորություններից, կանոնավոր մարզվել և այլն:

Մասնագետները սովորաբար նման խնդիրներով այցելուների համար կազմում են անհատական ծրագրեր՝ փորձելով հնարավորինս հիմնովին ձերբազատվել խնդրից: Սակայն կան մեթոդներ, որոնք ընդունելի են բոլորի համար:

1. Քնաբեր հաբեր

Եթե անքուն գիշերները հազվադեպ են, ապա հաղթել դրանց կարելի է քնաբեր հաբերով, որոնք թեև լուծում են խնդիրը, սակայն նախատեսված չեն երկարատև ընդունման համար, քանի որ կարող են կախվածություն առաջ բերել:

2. Ընթերցանություն

Սմարթֆոնների դարաշրջանում շատերը բավականին հաճախ քնում և արթնանում են հեռախոսները ձեռքներին՝ անտեսելով, որ նման սարքավորումներն ազդում են նյարդային համակարգի վրա, նաև վնասում աչքերը:

Մասնագետներն առաջարկում են սմարթֆոնը փոխարինել գրքով՝ վստահեցնելով, որ ընդամենը 20 րոպե ընթերցանությունը կարող է ցանկալի արդյունքի հասցնել:

3. Հարմարվողականություն

Անքնությամբ տառապող շատ մարդկանց համար քնի պակասի հիմնական պատճառն անհանգստությունն է արդեն տեղի ունեցած կամ սպասվելիք իրադարձությունների մասին: Մեկ հուշում. անքնությունը բուժելու լավագույն միջոցն ուղեղն ամբողջությամբ անջատելն է:

Վախ, ամոթ, դժգոհություն, զայրույթ. այս ամենը մարդու համար են, սակայն պետք է կարողանալ ճիշտ բաշխել ժամանակը: Գիշերը քնելու համար է, ցերեկը՝ հույզերը վերլուծելու:

4. Մաքուր օդ

Վաղուց ապացուցված է, որ քունն առավել լիարժեք է օդափոխվող սենյակում, երբ օրգանիզմը ջանքեր չի գործադրում մաքուր օդ շնչելու համար:

5. Ջերմություն

Տաք հեղուկը հրաշագործ ազդեցություն ունի անքնության դեպքում: Քնելուց առաջ ընդամենը մեկ բաժակ կաթն էլ բավական է, որ երազները չուշանան: Նաև տաք լոգանքն է քնաբեր, եթե սրտի խնդիրները չեն անհանգստացնում:



ԴԵՂԱՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Դեղատների տարածքները պետք է հագեցած լինեն համապատասխան կահույքով, սանհանգույցով ու ապահովված սանիտարական պատշաճ պայմաններով:

2. Դեղատների բոլոր աշխատակիցները պետք է պարբերաբար բուժզննում անցնեն:

3. Դեղատների անձնակազմի աշխատանքային հատվածները, մասնավորապես՝ սրահի այն մասը, որը նախատեսված է գնորդի ու վաճառողի անմիջական շփման համար, պետք է հագեցած լինի այնպիսի սարքերով, որոնք պաշտպանում են աշխատողներին ուղիղ կաթիլային վարակից:

4. Ամռանը, անհրաժեշտության դեպքում, արևոտ կողմում գտնվող պատուհաններն ու ցուցափեղկերը պետք է ապահովված լինեն արևապաշտպան սարքերով, որպեսզի դեղերն ու սարքավորումները չգտնվեն արևի ուղիղ ճառագայթների տակ:

5. Սրահի արտաքին ձևավորումը չպիտի խոչընդոտի հատուկ ախտահանող միջոցների օգտագործմամբ պարբերաբար իրականացվող թաց մաքրման աշխատանքներին:

6. Պատերի, առաստաղի ու հատակի հատվող մասերում չպետք է լինեն խորշեր, եզրեր և քիվեր:

7. Դեղատների բոլոր տարածքները պետք է ունենան ինչպես բնական, այնպես էլ արհեստական լուսավորություն:

Պահեստային սենյակներում պետք է իրականացվի միկրոկլիմայի պարամետրերի (ջերմաստիճանի, խոնավություն, օդի փոխանակում) մշտական հսկողություն:

Դեղերի տեղեկատվական թերթիկ

Սա նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր պատրաստվում են ընդունել տվյալ դեղամիջոցը, քանի որ հենց այստեղ են ներկայացվում դեղին ու բուժման ընթացքին առնչվող բոլոր ցուցումները՝ օգտագործման եղանակ, դեղաչափ տարբեր տարիքային խմբերի համար, հակացուցումներ և կողմնակի ազդեցություն, պահման ժամկետ ու պայմաններ և այլն:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի՝ մանրածախ իրացվող դեղերը պետք է ապահովված լինեն հայերեն բովանդակությամբ ներդիր-թերթիկով:

Սպառողների ազգային ասոցիացիան ցավով նշում է, որ կյանքից հեռացել են մեզ հետ երկար տարիներ համագործակցած ու սպառողների շահերի պաշտպանության ոլորտում մի շարք հաջողություններ գրանցած անվանի գիտնականներ Արմեն Թոչունյանն ու Արամ Նազարյանը:



ԱՐՄԵՆ ԹՈՉՈՒՆՅԱՆ

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա Իրավաբանական անձանց միության պատվավոր անդամ

Արմեն Թոչունյանի գիտական աշխատանքներն ուղղված են եղել մոլեկուլային ջրածնի արդյունաբերական արտադրության մեջ մանրէային հիդրոգենազային համակարգերի կիրառմանը:

Վերջին տարիներին եղել է ԵՊՀ Կենսաքիմիայի, Մանրէաբանության և Կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչը:

2014 թվականին արժանացել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի պատվավոր պրոֆեսորի, իսկ 2007-ին՝ Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոցի համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչման:



ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու, Տեղեկատվության վերլուծության պատասխանատու, Երևանի Ագրարային համալսարանի դոցենտ, Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա Իրավաբանական անձանց միության պատվավոր անդամ

Արամ Նազարյանը հեղինակել է 68 գիտական աշխատություն և մեթոդական աշխատանք, որոնցից 7-ը ՀՀ արտոնագրեր են: Գիտական հետազոտությունները վերաբերում են հացի, հրուշակեղենի և մակարոնեղենի արդյունաբերության տեխնոլոգիաներին և ֆունկցիոնալ նշանակության նոր արտադրատեսակների ստեղծմանը:

Արամ Նազարյանը ՀԱԱՀ մասնագիտական խորհրդի անդամ էր, Հեռակա ուսուցման դեպարտամենտի գիտխորհրդի անդամ և Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի գիտխորհրդի անդամ:

ԹԱՆԹՐՎԵՆԻ ՍԵՎ

Sambucus nigra L.

Հայկական տարանունները - բոռքիչ, թանթրավենի, կտրկենի, շամբուկ, փորքիչ



Դեղաբույսի նկարագրությունը: Այծատերևազգիների ընտանիքին պատկանող թուփ կամ մինչև 2-6 մետրի հասնող լայնասաղարթ ծառ է: Տերևները բարդ են, բնորոշ տհաճ հոտով: Ծաղիկները սպիտակ են, հոտավետ: Պտուղները սև են (այստեղից էլ ծագել է անունը), կլորավուն, հյութալի, պարունակում են 3-4 սերմ: Ծաղկում է հունիսին, երբ ծառն արդեն լրիվ տերևակալված է լինում, իսկ պտուղները հասունանում են օգոստոսին: Բույսի արմատը հողի մեջ խորը չի թափանցում: Ձրասեր է, լավ է դիմանում երաշտին, ցրտի նկատմամբ զգայուն է: Պտղակալում է ոչ կանոնավոր: Բազմանում է սերմերով և կտրոններով, հեշտությամբ վերաճում է նաև կոճղերից, դուրս եկած շիվերով:

Քիմիական բաղադրությունը: Ծաղիկները պարունակում են գլիկոզիդ սամբունիգրին, որը ճեղքվելով տալիս է կապտածնաթթու, բենզալդեհիդ և գլյուկոզա, այնուհետև C վիտամին, ռուտին, խեժ, եթերայուղ, խոլին, կալցիումական աղեր, քլորածնային, կոֆեինային, վալերիանային թթուներ, խնձորաթթու և քացախաթթու:

Պտուղներում հայտնաբերվել են վիտամիններ C, E, կարոտին, քրիզանթեմին, թիրոզին, դաբաղանյութեր, գինեթթու, խնձորաթթու, կարբոնաթթու, գլյուկոզա, ֆրուկտոզա: Տերևներից անջատվել է սամբունիգրին, եթերայուղ, ալդեհիդներ, C վիտամին, կարոտին, ճյուղերի կեղևից՝ եթերայուղ, խոլին, ֆիտոստերին, իսկ սերմերից՝ ճարպայուղ:

Բուժական նշանակությունը: Բուժման նպատակով օգտագործվում է ամբողջ բույսը, անգամ կեղևը և արմատները, սակայն հիմնականում՝ ծաղիկները և պտուղները: Ծաղիկները հավաքում են չոր եղանակին, լրիվ բացվելուց հետո: Կտրում են ամբողջ ծաղկաբույլը, չորացնում ստվերում, լավ քամիարվող տեղում: Պատրաստի հումքը պահում են չոր, քամիարվող տեղում, մառլայից պարկիկների մեջ: Ծաղկաբույլերը հավաքելիս չպետք է կտրել ճյուղերը, որ չպակասի բույսի հաջորդ տարվա բերքատվությունը: Պտուղները հավաքում են լրիվ հասունանալուց հետո (օգոստոս-սեպտեմբերին), չորացնում 30-35 աստիճանում: Չոր հումքը պահում են տուփերի մեջ, 6 ամիս: Դալար տերևները հավաքում են գարնանը, կեղևը՝ ամռանը:

Հայտնի են թանթրվենու ծաղիկների, պտուղների, տերևների և կեղևի միզամուղ, քրտնամուղ և լուծող հատկությունները, դրանք թուրմի և եփուկի ձևով կիրառվել են բրոնխսիտների, տարբեր տեսակի ջերմերի, ռևմատիզմի, պոդագրայի, երիկամային քարային դիաթեզի, փորկապության և փորի շրջանի ցավերի ժամանակ, իսկ արտաքին ողողումների ձևով՝ անգինայի, բերանի լորձաթաղանթի բորբոքումների, աչքերի և ականջների մի շարք հիվանդությունների դեպքում:

Կիրառման եղանակները: Ծաղիկներից թուրմ պատրաստելու համար 20 գ հումքը թրջում են 20 րոպե 1 լ եռման ջրում, հովանալուց հետո ըմպում 1-ական բաժակ, օրը 3 անգամ:

Պտուղներից ու տերևներից սառը ջրաթուրմ պատրաստելու համար վերցնում են կեսական թեյի գդալ, լցնում 1 բաժակ սառը ջրի մեջ, թողնում ամբողջ գիշերը և առավոտյան քիչ տաքացնելուց հետո ըմպում միանվագ:

Ծաղիկներից եփուկ պատրաստելու համար 20 գ չոր հումքը 1 բաժակ եռման ջրում եռացնում են 10 րոպե, ավելացնում մեղր ու ըմպում 1/4 բաժակ, օրը 3-4 անգամ, ուտելուց 15 րոպե առաջ:

Այլ օգտակար հատկանիշներ: Հասուն պտուղներից կարելի է պատրաստել մարմելադ, ժելե, մուրաբա, օշարակ, ջեմ, քացախ: Պտուղներից ստացվող ներկը մետաքսը ներկում է կարմիր և ձիթապտղագույն:

Արշավիր Թորոսյան
Հայաստանի դեղաբույսերը
Երևան, 1983



ՄԱՆԿԱԿԱՆ ԷԹԻԿԵՏ





Լավ վարվելակերպը սովորում են մանկուց: Դրա շնորհիվ երեխան հասկանում է, թե ինչպես պետք է վարվի որոշակի իրավիճակներում: Վարքի կանոնների իմացությունը հեշտացնում է շփումը հասակակիցների ու այլ մեծահասակների հետ:

Բարի գալուստ մանկապարտեզ

Նվազագույնը, որ պետք է իմանա երեխան մանկապարտեզ գնալիս, բարեկիրթ պահվածքն է: Սա նշանակում է, որ հարկավոր է բարևել, հրաժեշտ տալ, շնորհակալություն հայտնել և ներողություն խնդրել: Մեծահասակներն իրենց օրինակով են երեխային ցույց տալիս քաղաքավարի բառեր օգտագործելու կարևորությունը ոչ միայն ընտանիքի անդամների, այլև շրջապատողների նկատմամբ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում այլ երեխաների հետ վարվելակերպի կանոններին: Փոքրիկները պիտի սովորեն փոխանակել խաղալիքները, ուշադիր լսել, օգնել իրար:

Փաստենք, որ նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության գործին, ծնողներից բացի, մասնակցում են նաև դաստիարակներն ու մանկապարտեզի այլ աշխատակիցներ:

Ողջույնի վարվելակարգ

Երեխային ներկայացվող առաջին բանը ողջույնի կանոններն են: Մասնավորապես, երեխան պետք է իմանա, որ.

- հարազատներին, ընկերներին և ծանոթներին հանդիպելիս հարկավոր է ասել «բարև» (ի դեպ, ցանկալի է սա անել ժպիտով),
- ուսուցչին ողջունելիս ավելացվում է նրա անունը կամ ազգանունը,
- հեռանալիս անպայման պետք է ասել «ցտեսություն»,
- քնելուց առաջ քաղաքավարի մարդիկ միշտ մաղթում են «բարի գիշեր»:

Խոսքի վարվելակարգ

Երեխան պիտի իմանա, որ քաղաքավարի պետք է լինել միշտ, նույնիսկ ամենահասարակ զրույցի ընթացքում: Քաղաքավարի զրույցը կարող է օգնել նոր ընկերներ ձեռք բերել և մեծահասակների կողմից հարգանք վաստակել: Իսկ դա անելու համար զրույցի ընթացքում անհրաժեշտ է պահպանել որոշակի կանոններ, ինչպես օրինակ.

- քաղաքավարի մարդիկ միշտ լսում են զրուցակցին մինչև վերջ,
- զրույցի ընթացքում չպետք է զանգահարել այլ մարդկանց,
- հարկավոր է խուսափել շատախոսելուց:

Սնվելու վարվելակարգ

Վարվելակարգի կարևոր մասը սեղանի շուրջ պատշաճ պահվածքն է: Պետք է սկսել այն փաստից, որ երեխան պիտի գնահատի խոհարարների աշխատանքն ու հարգալից վերաբերվի նրանց: Քաղաքավարի երեխաներն ամենուր հետևում են մի քանի կարևոր կանոնների.

- գեղեցիկ չէ արմունկները սեղանին դնելը,
- աթոռին նստած ճոճվել չի կարելի,
- ուտելիս խոսելը չի խրախուսվում,
- վերջում հարկավոր է անձեռոցիկով սրբել ձեռքերն ու բերանը և անպայման շնորհակալություն հայտնել:

Ի դեպ, երեխան պիտի օգնի մեծահասակներին նաև սեղան գցելու և հավաքելու գործում:

Շփման վարվելակարգ

Ընկերության հիմքերը դրվում են մանկության տարիներին: Մեծահասակները երեխային բացատրում են, որ կյանքում շատ կարևոր է ընկերներ ունենալը, ինչի համար ևս սահմանված են հատուկ կանոններ, օրինակ.

- պիտի կարողանալ կիսել խաղալիքները,
- անհրաժեշտության դեպքում պետք է օգնել ընկերներին,
- եթե ընկերոջն ինչ-որ բան չի հաջողվում, նրան պետք է օգնել, զիջել և չվիճել մանրուքների շուրջ,
- չպետք է մոռանալ, որ իսկական ընկերներն ուրախանում են միմյանց հաջողություններով, կարեկցում որոշակի իրավիճակներում և անպայման պաշտպանում միմյանց,
- կարևոր է նաև ընկերոջ օգնությունն ու խորհուրդն ընդունելը:

Քնի վարվելակարգ

Ննջասենյակում գտնվելու ընթացքում ևս երեխաները պետք է պահպանեն որոշակի կանոններ, այդ թվում.

- քնից առաջ հարկավոր է լվանալ ատամները, օգտվել զուգարանից,
- ցանկալի չէ խաղալիքները տանել անկողին,
- հագուստը պետք է կոկիկ ծալված և դրված լինի աթոռին և այլն:

Մանկապարտեզում գործող կանոններն օգնում են երեխային հեշտորեն ինտեգրվել հասարակությանը: Նախադպրոցական տարիքում է, որ երեխան սովորում է լինել բարի ու հարգալից այլ մարդկանց նկատմամբ՝ հնարավորինս դյուրին դարձնելով մուտքը դպրոց:



ՏՈՒՐՔԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գարուն 2021

Թափանցիկ գործվածք,
ընդգծված ուսեր,
վառ արտահայտված գոլեր,
գույների հրավառություն. մի խոսքով՝ 2021-ի գարուն:

Շղարշե և շիֆոնե կիսաշրջազգեստներն ու զգեստները սեզոնի ամենահամարձակ միտումներից են: Դիզայներներից շատերը թափանցիկ գործվածքներից պատրաստված զգեստները լրացնում են ներքնազգեստ հիշեցնող հավաքածուներով:

Թեթև գործվածքներից կարված զգեստները համարձակ կտրվածքներով են, որոնք ի ցույց են դնում լանջի, ուսի, մեջքի, երբեմն էլ որովայնի գեղեցկությունը: Համաչափ կառուցվածքն ընդգծելու մեկ այլ հնարավորություն են կոստյումներն ու կոմբինեզոնները:





Պայուսակներ

Անկախ պայուսակի տեսքից, միևնույն է, կարևորը գործնականում հարմարավետ լինելն է: Շատ մեծ մոդելները տեսանելի հատվածներում զարդարված են գրպաններով՝ նախատեսված հեռախոսների ու դրամապանակի համար: Առավել նորաձև են նեոնային գույներով պայուսակները, որոնք կարող են զարդարված լինել փայլուն բյուրեղիկներով, ցանցով կամ մանրանկարչություն հիշեցնող պատկերներով:







Կոշիկներ

Երազելով տաք եղանակի մասին՝ բոլորը կարծես շտապում են օր առաջ ազատվել ծանր ու հաստ հագուստից ու կոշիկներից: Իսկ ընտրությունը, իհարկե, բազմազան է: Կարանտինի շրջանում կարծես թե առավել քան երբևէ գնահատվել է հարմարավետությունը, ու այսօր ամենանորաձևը ոչ թե դասական բարձր կրունկներով կոշիկներն են, այլ հենց այնպիսիք, որոնք ամենահարմարն են՝ տափակ պլատֆորմով, երբեմն հողաթափեր հիշեցնող մոդելներ, սանդալներ կամ մարզակոշիկ:

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում տղամարդիկ, ոչ պակաս, քան կանայք, մտածում են իրենց կերպարի մասին և հետևում նորաձևության բոլոր միտումներին: Բայց որքան էլ նորաձևությունն ազատություն ենթադրի, այդուհանդերձ տղամարդիկ հագուստ ընտրելիս անպայման պետք է կարևորեն իրենց տարիքն ու կարգավիճակը:

Բարեբախտաբար, սեզոնը ներկայացված է հարուստ ներկապնակով՝ շագանակագույնի երանգներից մինչև նուրբ կարամել, կապույտից մինչև մուգ մոխրագույն:

Համաշխարհային առաջատար դիզայներները ներկայացնում են թևերի համարձակ կտրվածքով պիջակներ, վառ գույներով փողկապներ ու շարֆեր, որոնք կատարյալ համադրվում են ինչպես ցերեկային, այնպես էլ երեկոյան հանդերձի հետ:



Պայուսակներ

Որպես կարևորագույն աքսեսուար, պայուսակները ամբողջական են դարձնում նորաձև տղամարդու կերպարը՝ անկախ նրանից՝ ծավալուն են, թե փոքր, փափուկ գործվածքից, բամբակից, թե նեյլոնից: Կարևորը իրավիճակին համապատասխանելն ու ֆունկցիոնալությունն է:



Կոշիկներ

Տղամարդկանց զգեստապահարանում կոշիկները նույնքան կարևոր են, որքան կանանց: Ճաշակի շուրջ չեն վիճում, սակայն շատ կարևոր է ծանոթ լինելը նորաձևության միտումներին և կոշիկները հագուստի հետ ճիշտ համադրելը:

Գարունը հարուստ է ոճերի և գույների խառնուրդով:

Յուրաքանչյուր տղամարդ պետք է ունենա դասական կոշիկներ: Թավշյա և կաշվե կոշիկները նրանց համար են, ովքեր սիրում են շքեղ տեսք ունենալ, իսկ, օրինակ, տղամարդկանց յուրօրինակ ոճի ապացույցը երկգույն մոդելներն են: Կոշիկների բազմազանության անբաժանելի մասն են մարզակոշիկները:









ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԻ 15-Ը ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՆ Է 2

2021 Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 6

Ո՞Չ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻՆ.....14

«Է3-Ի-ՁԻ-ՍԵՐՎԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.
ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՁԳՈՆՈՒԹՅՈՒՆ.....16

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ
ԿԱՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 20

ՀԱՄԱՑԱՆՑՆ ՈՒ ԵՐԵԽԱՆ..... 22

ԵԹԵ ՏԱՌԱՊՈՒՄ ԵՔ ԱՆՔՆՈՒԹՅԱՄԲ.....24

ԴԵՂԱՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ.....25

ԹԱՆԹՐՎԵՆԻ ՍԵՎ..... 27

ՄԱՆԿԱԿԱՆ ԷԹԻԿԵՏ.....28

ԳԱՐՈՒՆ 2021.....30

Հասցեն՝ Դավիթ Անհաղթ 23, 3-րդ հարկ
Թեժ գիծ՝ (010) 24-92-04
E-mail: info@armconsumer.am;
nationalconsumerassociation@yahoo.com
URL:http//www.armconsumer.am

Տպաքանակը՝ 2000: Ծավալը՝ 2 մամուլ
Տպագրվել է ՏՊԱՐԱՆ ԷՅ ԷՄ
տպագրատանը
Բաժանվում է անվճար
Գրանցման վկայականը՝ 2215
Հղումը ՍՊԱՌՈՂ-ին պարտադիր է

AEG SERVICE

+ 374 10 23-93-27
+ 374 10 29-75-31
aeg@aegservice.am

Ներտնային գազասպառման համակարգերի
տեխնիկական սպասարկման
ծառայությունների մատուցում

Մեր աշխատանքը
Ձեր անվտանգության երաշխիքն է








www.aegservice.am

Царский Продукт

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԻՑ
ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ



«ՅԱՐԻՅԻՆՈ»
ՄԱՄՄԵՐՔԻ ԿՈՄԲԻՆԱՏ

ՀՀ, ք.Երևան, Արին-Բերդի փ, 10/4, Հեռ. +37410432777